ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.02.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից 05.02.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-08/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից հայտարարված բաց մրցույթի արդյունքներով, որը հայտարարված է եղել 2011թ. հուլիսի 30-ին վավերապայմանները 2011թ. սեպտեմբերի 5-ի թիվ 49/1 մրցույթի արդյունքների արձանագրության հիման վրա, «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մրցույթում և կնքվել է «ՀԷՑ» ՓԲԸ աշխատակիցների փոխադրման համար ավտոտրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների մատուցման Ա-539/11-1 պայմանագիրը:

Ըստ Ա-539/11-1 պայմանագրի ծառայությունները պետք է մատուցվեն 01.10.2011թ-ից սկսած 3 տարվա ընթացքում, սակայն 02-ԵԲ 08/4979 12.11.2012թ. գրությամբ ընկերությանը տեղեկացվել է, որ որոշում է ընդունվել պայմանագրի 1.6 կետի համաձայն ծառայությունների ծավալը պակասեցնելու մասին, այն դեպքում երբ միաժամանակ կնքվում է պայմանագիր այլ ընկերության հետ առանց մրցույթի, նույն գնով (նոր պայմանագրի կատարողը աշխատում է հաստատագրված վճարով և

պակասեցված մասը վերաբերում է ԱԱՀ-ին մինչդեռ մրցույթի առաջարկները պետք է ներկայացվեր ԱԱՀ-ով, այսինքն ըստ էության նոր պայմանագրի գինը չի փոփոխվել՝ գինը չի նվազել) ավելի բարենպաստ պայմաններով (նոր պայմանագրով ծավալների պակասեցում նախատեսված չէ և այլն): «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն հարկ է համարել նշել, որ նախկինում պայմանագիրը խզելու նպատակով 08-ԵԲ06/2902 04.07.2012թ. գրությամբ տեղեկացրել են ծավալները ամբողջությամբ պակասեցնելու մասին, սակայն 08-ԵԲ06/3422 03.08.2012թ. գրությամբ խնդրել են հետկանչված համարել գրությունը:

Ըստ էության ստացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ն միակողմանիորեն հրաժարվում է վարձակալության պայմանագրից, այն դեպքում վարձակալության պայմանագիրը կնքվել է որոշակի՝ 3 տարի ժամկետով, իսկ դրանից միակողմանիորեն հրաժարվելու պայման պայմանագրով նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 348-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի գործողությունները կարող են հանգեցնել նրան, որ վերջինս կարող է հրաժարվել վարձակալված բոլոր մեքենաներից, հաշվի չառնելով պայմանագրի գործողության ժամկետը: Այսինքն պայմանագիրը գործողության մեջ լինելով հանդերձ կդադարի:

«ՀԷՑ» ՓԲԸ-ն նշված պայմանագրի գործողության ընթացքում նույն պայմանագրի համար 2 անգամ հայտարարել է մրցույթ: Առաջին դեպքում 17.08.2012թ. մրցույթը տվյալ ծառայության համար հայտարարվել է չկայացած մրցութային հայտերի գների բարձր լինելու պատճառով՝ համեմատած ներկայում գործող գների, այսինքն (A-539/11-1 պայմանագրի), իսկ երկրորդ դեպքում 12.10.2012թ-ին մրցակցային միջավայրի բացակայության պատճառով:

«Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ընկերության կողմից բոլոր ծառայությունները մատուցվել և մատուցվում են պատշաճ կերպով և քանի որ տվյալ պայմանագիրը կնքվել է երեք տարի ժամկետով, ուստի ընկերությունը կատարել է մեծ ներդրում տվյալ տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար:

«Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն նշել է նաև, որ թիվ A-539/11-1 պայմանագիրը կնքվել է բաց մրցույթի արդյունքում և հանդիսանում է պարտադիր կողմերի համար:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը, ինչպես նաև ՀԷՑ ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության 1.1.2 կետը և 1.3.2 կետը:

«Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Ի լրումն 05.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքի՝ «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն 25.02.2013թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքված N A-1166/12 պայմանագիրը:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.02.2013թ. N 04/032-238 գրությամբ դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 05.02.2013թ. «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 15.02.2013թ. N AT-115 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել ավտոտրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N 49/1 ընթացակարգին վերաբերող փաստաթղթեր, սակայն նշված գրությամբ բողոքի վերաբերյալ որևէ կարծիք չի հայտնել, իսկ 25.02.2013թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել առարկություններ՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «Էկթրաք սերվիս» կողմից 05.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքի կապակցությամբ հայտնում է, որ ամբողջությամբ առարկում է այդ բողոքի դեմ և գտնում է, որ բողոքն անհիմն է, անօրինական և ենթակա է ամբողջությամբ մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն գտնում է, որ «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի բողոքում առանցքային դատողությունները չեն համապատասխանում

իրականությանը, քանի որ բողոքի հեղինակը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 348 հոդվածի 1-ին մասը, մինչդեռ.

ա) բողոքի հեղինակի պնդումները հերքվում են նույն հոդվածի հաջորդ իսկ (բողոքում բաց թողնված) 2-րդ մասի բովանդակությամբ (Պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվելը՝ կապված դրա կողմերի ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, և նման պարտավորության պայմանների միակողմ փոփոխելը թույլատրվում է նաև պայմանագրով նախատեսված դեպքերում, եթե այլ բան չի բխում օրենքից կամ պարտավորության էությունից) և

բ) քննարկվող (պայմանագրային) պարտավորության նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի (Պայմանագիրը փոփոխելու և լուծելու հիմքերը) 3-րդ մասի հատուկ նորմը, համաձայն որի՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրականացրել է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ A-539/11-1 պայմանագրի 1.6 կետով նախատեսված իր իրավունքը և պակասեցրել է մատուցվող ծառայությունների ծավալը՝ երկու տրանսպորտային միջոցների մասով: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված թիվ A-539/11-1 պայմանագիրը չի լուծվել:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված գինը շատ ավելի ցածր է, քան «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքված A-539/11-1 պայմանագրով նախատեսված գինն է:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համար իր գործողությունների տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորող վերլուծական տեղեկանքը կցվել է նույն առարկություններին:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն չի ընդունում նաև բողոքում նշված «քանի որ տվյալ պայմանագիրը կնքվել է երեք տարի ժամկետով, ուստի և «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից կատարվել է մեծ ներդրում տվյալ տրանսպորտային միջոցների ձեռքբերման համար» փաստը: «ՀԷՑ» ՓԲԸ-ն հայտնել է, որ «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից այդ տրանսպորտային միջոցները ձեռք են բերված եղել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ թիվ A-539/11-1 պայմանագիրը կնքվելուց՝

27.09.2011թ. մի քանի տարի առաջ և «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել որևէ ապացույցներ իր վկայակոչած փաստերը ապացուցելու համար:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն գտնում է, որ որևէ իրավախախտում թույլ չի տրվել և «Հայասատանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իր գործունեությունն իրականացվել և իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և գնումային ընթացակարգերին խստիվ համապատասխան և խնդրել է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի բողոքն ամբողջությամբ մերժել:

3. ԳԲԽ-11/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկում է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից 05.02.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքված N A-1166/12 ծածկագրով պայմանագիրը կնքելու միակ աղբյուրից իրականացված գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

4. ԳԲԽ-11/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 05.02.2013թ. ներկայացված բողոքը, 49/1 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 05.09.2011թ. կայացած նիստի N 49/1 արձանագրությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքված N A-1166/12 ծածկագրով պայմանագիրը (այսուհետև՝ նաև Պայմանագիր), Պատվիրատուի կողմից 15.02.2013թ. N AT-115 և 25.02.2013թ. գրությունները և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ավտոտրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «49/1» ծածկագրով մրցույթ (այսուհետև՝ Մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 05.09.2011թ. կայացած նիստի N 49/1 արձանագրությամբ որոշում է կայացվել երկրորդ չափաբաժնով հաղթող ճանաչել «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ին և առաջարկել կնքել պայմանագիր՝ պայմանագրի կատարման 10 տոկոսի երաշխիքը ներկայացնելուց հետո:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի աշխատակիցների փոխադրման համար Պատվիրատուի և «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի միջև 27.09.2011թ. կնքվել է ավտոտրանսպորտային միջոցների վարձակալության ծառայությունների մատուցման N A-539/11-1 ծածկագրով պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմել է 246.456.000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Պատվիրատուն 12.11.2012թ. N 08 ԵԲ 08/4929 և 25.01.2013թ. N 08 ԵԲ 08/422 գրություններով դիմել է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ին՝ տեղեկացնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի միջև 27.09.2011թ. կնքված N A-539/11-1 պայմանագրի 1.6 կետով նախատեսված իրավունքից օգտվելու ու Տոյոտա մակնիշի համապատասխանաբար «608 LO 67», «607 LO 67», «605 LO 67» և «382 LO 67» պետահամարանիշների տրանսպորտային միջոցների մասով պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալը պակասեցնելու մասին:

«Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ընկերությանը տեղեկացվել է, որ որոշում է ընդունվել պայմանագրի 1.6 կետի համաձայն ծառայությունների ծավալը պակասեցնելու մասին, մինչդեռ միաժամանակ առանց մրցույթի, նույն գնով կնքվել է պայմանագիր այլ ընկերության՝ մասնավորապես «Էլիտբաս» ՍՊԸ-ի հետ, որով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը, ինչպես նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության 1.1.2 և 1.3.2 կետերը:

Կենտրոնում ս.թ. փետրվարի 25-ին ժամը 16:00-ին կազմակերպված N ԳԲԽ 11/13 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը գրությամբ հանձնաժողովին ներկայացրեց N ԳԲԽ 11/13 բողոքի վերաբերյալ Պատվիրատուի առարկությունները, որին կցված էր նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործողությունների տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորող վերլուծական տեղեկանք: Տեղեկանքի

աղյուսակ N 2-ում նշված էր, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ի հետ 29.11.2012թ. կնքված N Ա-1166/12 պայմանագրով վարձակալության ամսեկան պայմանագրային վճարը «Mitsubishi, Higer» մակնիշի ավտոբուսների մասով կազմում է 36.000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի և ԱԱՀ-ով): Հանձնաժողովի այն հարցին, թե պայմանագրով նախատեսված ինչ տեսակի ծառայության համար է նախատեսված նշված 36.000 ՀՀ դրամը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ 29.11.2012թ. կնքված N Ա-1166/12 պայմանագրի գնման առարկան բաղկացած է երկու չափաբաժիններից՝ թվով երկու ավտոբուսների վարձակալության ծառայությունից, իսկ նշված 36.000 ՀՀ դրամը հանդիսանում է ավտոոբուսներից յուրաքանչյուրի օրեկան վարձակալության համար սահմանված գումարը, այսինքն Պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալով մատուցվող ծառայությունների օրեկան արժեքը կազմում է 72.000 ՀՀ դրամ: Հանձնաժողովի կողմից պահանջվեց ներկայացնել 29.11.2012թ. կնքված N Ա-1166/12 պայմանագիրը, ինչպես նաև խնդրվեց պարզաբանել, թե ինչ ընթացակարգի արդյունքում է կնքվել նշված պայմանագիրը, որին ի պատասխան, Պատվիրատուի ներկայացուցիչը Հանձնաժողովին տրամադրեց պահանջվող պայմանագիրը և հայտնեց, որ նշված պայմանագիրը կնքվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության 7.8 ենթակետով նախատեսված միակ աղբյուրից իրականացվող գնման արդյունքում, քանի որ մինչև նշված պայմանագրի կնքումը երկու անգամ հայտարարվել է մրցույթ և երկու մրցույթներն էլ հայտարարվել են չկայացած, որից հետո գնման պահանջը դարձել է հրատապ:

Պատվիրատուի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման N A-1166/12 ծածկագրով պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր): Պայմանագրի 8.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն պարտավոր է պայմանագրով նախատեսված ծառայությունների համար վճարել վարձատրություն 72.000 (յոթանասուներկու հազար) ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Պայմանագրի 11.1 ենթակետով սահմանվել է, որ նույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և դրա պայմանները պայմանագրի կողմերի համար պարտադիր են դառնում նույն պայմանագրի կնքման (պայմանագրի կողմերի ստորագրման) պահից՝ 29.11.2012թ., և գործում է մինչև 2013թ. դեկտեմբերի 15-ը: Այսինքն, Պայմանագրով նախատեսված ծառայությունների ամբողջ

ծավալով մատուցման ընդհանուր գումարը՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում կազմում է ավելի, քան 18.000.000 ՀՀ դրամը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի.

- 1-ին կետի է. ենթակետի համաձայն՝ պատվիրատու են հանրային կազմակերպությունները,
- 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ հանրային կազմակերպությունները ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ներառված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են, որոնք գործունեություն են իրականացնում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում,
- 23-րդ կետի համաձայն՝ գնումների բազային միավորը 1.000.000 ՀՀ դրամն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի.

- 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով,
- 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների բողոքարկումն իրականացվում է նույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով,
- 2-րդ մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերը չեն կարող հակասել նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին, իսկ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սահմանած լրացուցիչ պահանջներին:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 27.04.2011թ. N 201Ա որոշմամբ հաստատվել է հանրային կազմակերպությունների ցանկը, որոնց գնումների կարգերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության հանրային

ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իրավասու է սահմանել լրացուցիչ պահանջներ և ցանկում ներառված է նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում,

- 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորը, ապա գնումը կարող է կատարվել բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի կողմից 2008թ. N 7/08-ՀՄ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության (այսուհետև նաև՝ Կանոնադրություն) 1.1.2 կետի համաձայն՝ 10.000.000 ՀՀ դրամից (առանց ԱԱՀ) ցածր արժեքով գնումներ իրականացնելիս կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելիս՝ պայմանով,

որ մեկ անձի հետ կնքվող պայմանագրի արժեքը նույն կետում նշված գումարից բարձր է, սակայն չի գերազանցում ամսեկան 2.400.000 ՀՀ դրամը (առանց եկամտահարկի), նույն Կանոնադրության 5-րդ բաժնով սահմանված ընթացակարգերի կիրառումը պարտադիր չէ, սակայն նման պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է արտացոլված լինի ղեկավարի՝ տնօրենների խորհրդին ներկայացվող եռամսյակային հաշվետվության մեջ:

Կանոնադրության 1.3.2 կետի համաձայն՝ գնումները, որոնք չեն գերազանցում նույն Կանոնադրության 1.1.2 կետում նշված գումարը, կարող են իրականացվել ինչպես նույն Կանոնադրությամբ նախատեսված ընթացակարգերի համապատասխան, այնպես էլ այլ եղանակներով:

Կանոնադրության 7.8.1.1 ենթակետի համաձայն՝ միակ աղբյուրից իրականացվող գնումները կարող են իրականացվել, եթե առկա է արտադրանքի մեջ հրատապ պահանջարկի առկայություն, ինչի կապակցությամբ այլ ընթացակարգերի անցկացումը նպատակահարմար չէ: Տվյալ հիմնավորմամբ միակ աղբյուրից իրականացվող գնման թույլտվության համար դիմելիս՝ ԿԳՄ-ն ստուգում է (անկախ ընդունված որոշումից) թէ արդյոք հրատապությունը չի հանդիսացել պատվիրատուի պաշտոնատար անձանց անշրջահայացության արդյունք, և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է ծառայողական քննություն և մեղավորների պատասխանատվության ենթարկելը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքված N A-1166/12 ծածկագրով ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվել է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետով, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետով և Կանոնադրության 1.1.2, 1.3.2 և 7.8.1.1 ենթակետերով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ 29.11.2012թ. կնքված N A-1166/12 ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը գերազանցում է ինչպես Օրենքի 2-րդ հոդվածով սահմանված գնումների բազային միավորը, այնպես էլ Կանոնադրության 1.1.2 ենթակետով սահմանված արժեքի չափը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով հիմնավոր է:

Ինչ վերաբերում է «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված՝ վերջինիս և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 27.09.2011թ. կնքված՝ աշխատակիցների փոխադրման համար ավտոտրանսպորտային միջոցների

վարձակալության ծառայությունների մատուցման N A-539/11-1 պայմանագրի ծավալների նվազեցման մասին վկայակոչած փաստերին և դրանց վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումներին, ապա գտնում ենք, որ ներկայացված փաստերը և դրանց համար ներկայացված հիմնավորումները դուրս են բողոքի առարկայի քննության շրջանակներից:

Բողոքաբեր կազմակերպությունը Կենտրոնին ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի ընդունել կնքված պայմանագիրը չեղյալ հայտարարելու որոշում՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց նույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. նույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Տվյալ դեպքում բողոքի քննության ընթացքում չհիմնավորվեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. N A-1166/12 ծածկագրով պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի ա և բ ենթակետերով նախատեսված պահանջների խախտմամբ կնքված լինելու հանգամանքը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ բողոքն այս հիմքով անհիմն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Այսպիսով գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից 05.02.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը ենթակա է բավարարման մասնակի:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետեը գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Էկթրաք սերվիս» ՍՊԸ-ի կողմից 05.02.2013թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Էլիտբաս» ՍՊԸ-ի միջև 29.11.2012թ. կնքված N A-1166/12 ծածկագրով պայմանագիրը կնքելու միակ աղբյուրից իրականացված գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Սուսաննա Աղաջանյան